



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

----- 2017 թվականի №...Ա  
քաղ. Երևան

**«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍԱՅԻՆ ՑԱՆՑ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ  
ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ՏՐԱՄԱՂԻՎԱԾ ՆՐԱՌՈՒԳ/Կ-156-ՆՐԱՌՈՒԳ/Կ-186, ՆՐԱՌՈՒԳ/Կ-188-  
ՆՐԱՌՈՒԳ/Կ-191 ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՄԻ ՇԱՐՔ  
ՈՐՈՇՈՒՄՆԵՐ ՈՒՇԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ԵՎ «ՀԱՅԱՍՏԱՆԻ  
ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍԱՅԻՆ ԵՎ ՌԱԴԻՈՀԱՂՈՐԴԻՉ ՑԱՆՑ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ  
ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵ  
ԳՈՒՄԱՐԻ ՓՈԽԱՆՑՈՒՄ ՊԱՐՏԱՎՈՐԵՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հիմք ընդունելով «Էլեկտրոնային հաղորդակցության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասը, 17.1 հոդվածը, «Լիցենզավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետը, «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 72-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի «ա» ենթակետը, 78-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերը, Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) 2011 թվականի մայիսի 11-ի №231Ն որոշումը և հաշվի առնելով «Հայաստանի հեռուստատեսային և ռադիոհաղորդիչ ցանց» փակ բաժնետիրական ընկերության (այսուհետ՝ Ընկերություն) 2017 թվականի օգոստոսի 8-ի դիմումը՝ Հանձնաժողովը **որոշում է.**

1. Ուժը կորցրած ճանաչել՝
  - 1) Հայաստանի Հանրապետության տրանսպորտի և կապի նախարարության «Հեռահաղորդակցության հանրապետական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության կողմից 2005 թվականի հուլիսի 20-ին «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍԱՅԻՆ ՑԱՆՑ» փակ բաժնետիրական ընկերությանը տրամադրված ռադիոռելեային կապի գծերի շահագործման ՆՐԱՌՈՒԳ/Կ-156-ՆՐԱՌՈՒԳ/Կ-186, ՆՐԱՌՈՒԳ/Կ-188- ՆՐԱՌՈՒԳ/Կ-191 թույլտվությունները,

- 2) Հանձնաժողովի 2008 թվականի մարտի 28-ի «Հայաստանի հեռուստատեսային և ռադիոհաղորդիչ ցանց» փակ բաժնետիրական ընկերությանը ռադիոհաճախականության օգտագործման թույլտվություն տրամադրելու մասին» №146Ա որոշումը,
  - 3) Հանձնաժողովի 2010 թվականի օգոստոսի 18-ի «Հայաստանի հեռուստատեսային և ռադիոհաղորդիչ ցանց» փակ բաժնետիրական ընկերությանը տրամադրված №ՌՌԳ/կ-156, №ՌՌԳ/կ-177, №ՌՌԳ/կ-179-№ՌՌԳ/կ-186, №ՌՌԳ/կ-188-№ՌՌԳ/կ-191 թույլտվությունների գործողության ժամկետը երկարաձգելու և վերաձևակալելու մասին» №438Ա որոշումը,
  - 4) Հանձնաժողովի 2010 թվականի օգոստոսի 18-ի «Հայաստանի հեռուստատեսային և ռադիոհաղորդիչ ցանց» փակ բաժնետիրական ընկերությանը տրամադրված №ՌՌԳ/կ-178 թույլտվությունների գործողության ժամկետը երկարաձգելու և վերաձևակալելու մասին» №439Ա որոշումը:
2. Ընկերությանը՝ սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից տասնօրյա ժամկետում 900005281812 հաշվեհամարով Հայաստանի Հանրապետության պետական բյուջե վճարել ռադիոհաճախականությունների օգտագործման վճարի մասով մինչև 2017 թվականի սեպտեմբերի 1-ը հաշվարկված 3 612 976 (երեք միլիոն վեց հարյուր տասներկու հազար ինը հարյուր յոթանասունվեց) դրամ պարտքը:
3. Ընդունել ի գիտություն, որ Ընկերությունն իրավասու է՝
- 1) սույն որոշման հրապարակումից հետո երեսնօրյա ժամկետում միջնորդել Հանձնաժողովին՝ վերանայելու այն.
  - 2) սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից երկամսյա ժամկետում այն բողոքարկել Հայաստանի Հանրապետության վարչական դատարան:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Ընկերությանն օրենքով սահմանված կարգով իրազեկելուն հաջորդող օրվանից, բացառությամբ սույն որոշման 1-ին կետի, որն ուժի մեջ է մտնում 2017 թվականի սեպտեմբերի 1-ից:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ  
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ  
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝**

**Ռ.ՆԱԶԱՐՅԱՆ**